Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

)10 թվականի հունիսի 18 **թիվ 311** քաղ. Սանկտ Պետերբուր

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԵՎ ՆՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՉԳՏՆՎՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՓԱՍՏՆ ԱՐՏԱՑՈԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մաքսային միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման կարգի եւ նման ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» միջազգային համաձայնագրի 7-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝

Մաքսային միության հանձնաժողովը **որոշեց.**

1. Հաստատել «Ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մասով մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի եւ նման ապրանքները մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու վերաբերյալ փաստն արտացոլելու մասին» ցուցումները (կից ներկայացվում է):
2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում «Մաքսային միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման կարգի եւ նման ապրանքների բացթողման հետ կապված՝ մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» միջազգային համաձայնագրի ժամանակավոր կիրառման օրվանից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ա. Կոբյակով	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**

Հաստատված է
Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 311 որոշմամբ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԵՎ ՆՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՉԳՏՆՎՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՓԱՍՏՆ ԱՐՏԱՑՈԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Սույն Ցուցումները մշակվել են «Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 7-րդ հոդվածի 7-րդ եւ 9-րդ կետերի հիման վրա, եւ դրանցով սահմանում են այդպիսի ապրանքների մասով մաքսային գործառնություններ իրականացնելու եւ դրանք մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու փաստն արտացոլելու կարգը:

Սույն Հրահանգում օգտագործվող եզրույթները գործածվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), Համաձայնագրով, Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված իմաստներով:

2. Մաքսային միության անդամ պետության մաքսային մարմնի (այսուհետ՝ մաքսային մարմին) կողմից մաքսային գործառնությունների իրականացման վայրերում ֆիզիկական անձանց համար պետք է ապահովվի անձնական օգտագործման ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) մաքսային հայտարարագրման եւ բացթողման նպատակով դրանք մաքսային մարմին ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը ծանոթանալու հնարավորություն:

Այդպիսի տեղեկատվությունը պետք է պարունակի մաքսային օրենսդրության՝ ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային սահմանով (այսուհետ՝ մաքսային սահման) անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման կարգն ու պայմանները՝ ներառյալ ապրանքների մաքսային հայտարարագրումը սահմանող հիմնական դրույթները, ինչպես նաեւ մաքսային օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացում:

Տեղեկատվությունը կարող է տեղադրվել ստենդների, վահանակների, ցուցատախտակների եւ (կամ) տեղեկատվական նյութեր պարունակող այլ հարմարանքների վրա, բուկլետներում եւ (կամ) այլ տեղեկատվական նյութերում՝ շարադրված Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով, ռուսերենով եւ անգլերենով, ինչպես նաեւ ցանկացած այլ լեզվով, որի օգտագործումը մաքսային գործառնությունների իրականացման վայրում մաքսային մարմնի կողմից կճանաչվի նպատակահարմար:

Ուղեւորային մաքսային հայտարարագիր (այսուհետ՝ հայտարարագիր) լրացնելու համար պետք է սարքավորվեն վայրեր՝ հայտարարագրի մաքուր ձեւաթղթերի բավարար քանակությամբ, ինչպես նաեւ դրանց լրացված օրինակներով՝ մաքսային միության անդամ պետության պետական լեզվով, ռուսերենով եւ անգլերենով, ինչպես նաեւ ցանկացած այլ լեզվով, որի օգտագործումը մաքսային գործառնությունների իրականացման վայրում մաքսային մարմնի կողմից կճանաչվի նպատակահարմար:

Մաքսային գործառնությունների իրականացման վերաբերյալ օրենսդրության պահանջները ֆիզիկական անձանց պարզաբանելու համար այդպիսի գործառնությունների իրականացման վայրում պետք է ներկա գտնվեն մաքսային մարմնի՝ գործնական աշխատանքի փորձ ունեցող պաշտոնատար անձինք:

3. Ապրանքների հայտարարագրումը կարող է իրականացվել ոչ այն մաքսային մարմնում, որտեղ գտնվում են այդ ապրանքները՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում եւ կարգով՝ պայմանով, որ այդպիսի մաքսային մարմինները տեղակայված են Մաքսային միության մեկ անդամ

պետության տարածքում:

4. Հայտարարագիրը լրացնելուց հետո հայտարարատուն այն հանձնում է մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձին եւ ներկայացնում հայտարարագրված ապրանքներն ու հայտարարագրում նշված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի պահանջելու օտար լեզվով կազմված փաստաթղթերի գրավոր թարգմանությունը Մաքսային միության այն անդամ պետության պետական լեզվով, որի մաքսային մարմին է ներկայացվում հայտարարագիրը, կամ ռուսերենով՝ բացառությամբ սույն կետի երրորդ մասով նախատեսված դեպքերի: Փաստաթղթերը հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից թարգմանվելու դեպքում այդպիսի թարգմանությունը հաստատվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի լիազորված անձի ստորագրությամբ:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձինք պարտավոր են օտար լեզվով ընդունել հետեւյալ փաստաթղթերը՝

անձնագիր կամ ապրանքների սեփականատիրոջ կամ դրանք տիրապետողի անձը եւ բնակության վայրը հաստատող այլ փաստաթուղթ.

ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր (տեխնիկական անձնագիր, տեխնիկական կտրոն), կամ դրան փոխարինող փաստաթուղթ՝ օտարերկրյա պետության տարածքում գրանցված եւ մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների բացթողման դեպքում:

5. Հայտարարագրի գրանցման ժամանակ մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձը գիծ է քաշում հայտարարագրի՝ հայտարարատուի կողմից չլրացված տողերի վրա եւ գրանցում է այն Մաքսային միության անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի, այսինքն՝ բելառուսական Կողմի պարագայում՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի, ղազախստանյան Կողմի պարագայում՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային հսկողության կոմիտեի, ռուսական Կողմի պարագայում՝ Դաշնային մաքսային ծառայության (այսուհետ՝ կենտրոնական մաքսային մարմին) կողմից սահմանված կարգով: Գրանցման պահից հայտարարագիրը դառնում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի մասին վկայող փաստաթուղթ:

6. Հայտարարագիրը չի գրանցվում մաքսային մարմնի կողմից, եթե՝

1) հայտարարագիրը ներկայացվել է մաքսային հայտարարագրեր գրանցելու իրավասություն չունեցող մաքսային մարմին,

2) հայտարարագիրը ներկայացվել է համապատասխան լիազորություն չունեցող անձի կողմից,

3) հայտարարագիրը պարունակում է ոչ ընթեռնելի գրառումներ, քերվածքներ, ջնջումներ ու ուղղումներ՝ բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի, եւ (կամ) չլրացված սյունակներ,

4) հայտարարագիրը ստորագրված կամ պատշաճորեն հաստատված չէ կամ կազմված չէ սահմանված ձեւով,

5) չեն ներկայացվել հայտարարագրված ապրանքները:

7. Հայտարարագրի գրանցման մերժումը ձեւակերպվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հայտարարագրի հիմնական տեղեկաքարտի «Ծառայողական նշումների համար» բաժնում «Գրանցումը մերժված է ....

պատճառով» գրառումը կատարելու միջոցով՝ նշելով մերժման հիմնավորված պատճառը եւ ամսաթիվը: Գրառումը հաստատվում է մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի՝ համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

Հայտարարագիրը գրանցումը մերժելու մասին ձեւակերպմամբ վերադարձվում է հայտարարատուին:

8. Հայտարարագրում ներկայացված տեղեկությունները մաքսային մարմնի թույլտվությամբ կարող են փոփոխվել կամ լրացվել մինչեւ ապրանքների բացթողումը՝ հայտարարատուի պատճառաբանված դիմումի հիման վրա, եթե կատարվելիք փոփոխությունները եւ լրացումները չեն ազդում ապրանքի բացթողման վերաբերյալ որոշման ընդունման վրա եւ չեն հանգեցնում մաքսային վճարների չափի որոշման եւ արգելքների ու սահմանափակումների պահպանման վրա ազդեցություն ունեցող տեղեկությունների փոփոխման անհրաժեշտության:

Գրանցված հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխություններն ու լրացումները չեն կարող հանգեցնել գրանցված հայտարարագրում նշված ապրանքներից բացի այլ ապրանքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելուն:

9. Հայտարարատուի կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված կարգի եւ պայմանների պահպանման դեպքում, մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից իրականացվում է ապրանքների բացթողում:

10. Ապրանքների բացթողումը ձեւակերպվում է հայտարարագրի հիմնական եւ լրացուցիչ ֆորմուլյարների բոլոր օրինակների՝ «Ծառայողական նշումների համար» բաժնի «Կ.Տ» սյունակում մաքսային մարմնի՝ բացթողումն իրականացրած պաշտոնատար անձի՝ համարակալված անհատական կնիքը դնելու միջոցով: Կենտրոնական մաքսային մարմնի կողմից կարող են նախատեսվել անձնական օգտագործման ապրանքների բացթողման մասին վկայող լրացուցիչ նշումներ:

11. Հայտարարատուի կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված պայմանները չկատարելու դեպքում մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը:

Ապրանքների բացթողման մերժումը ձեւակերպվում է հայտարարագրի հիմնական ֆորմուլյարի «Ծառայողական նշումների համար» բաժնում «Բացթողումը մերժված է ... պատճառով» գրառումը կատարելու միջոցով՝ նշելով մերժման հիմնավորված պատճառը եւ ամսաթիվը: Գրառումը հաստատվում է մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

Բացթողման մերժմամբ հայտարարագրի օրինակը կամ այդպիսի հայտարարագրի պատճենը՝ հաստատված մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով, տրամադրվում է հայտարարատուին:

Եթե հայտարարատուն որոշում է ընդունում Մաքսային միության մաքսային տարածքից (այսուհետ՝ մաքսային տարածք) այն ապրանքների արտահանման մասին, որոնց բացթողումը մաքսային տարածք ներմուծման ժամանակ մերժվել է մաքսային մարմնի կողմից, ապա այդպիսի մերժումը միաժամանակ այդպիսի ապրանքները մաքսային տարածքից դուրս հանելու թույլտվություն է, եթե այդպիսի ապրանքները չեն հեռացվել ժամանման վայրից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքները վարչական կամ քրեական իրավախախտման օբյեկտ են: Արտահանումը կարող է իրականացվել հայտարարատուի կամ հայտարարատուի հանձնարարությամբ՝ ցանկացած ֆիզիկական անձի կողմից:

12. Այն դեպքում, երբ հայտարարատուի կողմից միեւնույն հայտարարագրում նշվել են մի քանի ապրանքներ, իսկ բացթողում կարող է իրականացվել միայն այդ ապրանքների մի մասի նկատմամբ, մաքսային մարմինը մերժում է բոլոր ապրանքների բացթողումը: Ընդ որում, հայտարարատուն իրավունք ունի ներկայացնելու նոր հայտարարագիր այն ապրանքների վերաբերյալ, որոնց առնչությամբ նա կատարում է ապրանքների բացթողման համար Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված պայմանները:

13. Մաքսային տարածքից ապրանքների արտահանման ժամանակ ապրանքների բացթողումը միաժամանակ դրանք մաքսային տարածքից դուրս հանելու թույլտվություն է:

14. Ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցները ազատ շրջանառության մեջ բաց թողնելու դեպքում, կենտրոնական մաքսային մարմնի կողմից կարող է նախատեսվել այդպիսի ապրանքների բացթողումը հաստատող լրացուցիչ փաստաթղթերի ձեւակերպում:

15. Մաքսային վճարներից ազատմամբ մաքսային հայտարարագրման ենթակա՝ ժամանակավոր ներմուծվող անձնական օգտագործման ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների բացթողման դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձը հայտարարագրի հիմնական ֆորմուլյարի հիմնական եւ լրացուցիչ թերթիկների «Ծառայողական նշումների համար» սյունակում կատարում է «Ժամանակավոր ներմուծման ժամկետը՝ մինչեւ _____» գրառումը՝ նշելով այն ամսաթիվը (օրը, ամիսը եւ տարին) ներառյալ, որը լրանալուց առաջ հայտարարատուն պարտավոր է դիմել մաքսային մարմին ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու համար, դուրս հանել ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցները մաքսային տարածքից կամ իրականացնել Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամանակավոր ներմուծման նախնական ժամկետը երեք ամիս է:

16. Մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող կամ այդ տարածքից հետ արտահանվող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների առնչությամբ կենտրոնական մաքսային մարմնի կողմից կարող է նախատեսվել հայտարարագրի փոխարեն այնպիսի այլ փաստաթղթերի օգտագործման հնարավորություն եւ կարգ, որոնք կիրառվելու են մաքսային սահմանով ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցները բազմակի տեղափոխելու պարագայում (այսուհետ՝ այլ փաստաթուղթ), ինչպես նաեւ դրանց ձեւը եւ մաքսային մարմնի կողմից ձեւակերպման կարգը:

17. Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու համար հայտարարատուն մինչեւ ժամանակավոր ներմուծման ժամկետի ավարտը պարտավոր է դիմել մաքսային մարմին՝ նշված ժամկետի երկարաձգման անհրաժեշտության մասին կամայականորեն կազմված դիմումով, եւ մաքսային մարմնի պաշտոնատար անձին ներկայացնել մաքսային մարմնի կողմից անձնական օգտագործման այդ կատեգորիայի ապրանքների ժամանակավոր ներմուծման ժամանակ ձեւակերպված հայտարարագիրը (տրանսպորտային միջոցների համար) կամ այլ փաստաթուղթ (ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների համար), ինչպես նաեւ կատարել Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված այլ մաքսային գործառնություններ:

Ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին արտացոլվում է հայտարարատուի կողմից ներկայացված հայտարարագրի (այլ փաստաթղթի) «Ծառայողական նշումների համար» բաժնում եւ դիմումի մեջ՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից «Ժամկետը երկարաձգված է մինչեւ ___» գրառումը կատարելու միջոցով՝ նշելով այն ամսաթիվը (օրը, ամիսը եւ տարին ներառյալ), որը լրանալուց առաջ հայտարարատուն պարտավոր է դիմել մաքսային մարմին՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետի սահմաններում ժամանակավոր ներմուծման ժամկետը կրկին երկարաձգելու համար, կամ մաքսային հայտարարագրման համար դիմել մաքսային մարմին՝ ապրանքը ազատ շրջանառության մեջ բաց թողնելու, հետ արտահանելու կամ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու նպատակով: Գրառումը հաստատվում է մաքսային մարմնի՝ ժամկետի երկարաձգումն իրականացրած լիազորված պաշտոնատար անձի համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

Հայտարարագրի (այլ փաստաթղթի) բնօրինակը՝ ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին նշումներով, վերադարձվում է հայտարարատուին: Դիմումը ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին նշումներով հայտարարագրի (այլ փաստաթղթի) պատճենի հավելվածով թողնվում է մաքսային մարմնի գործերում:

Ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգած մաքսային մարմինը դրա մասին տեղեկացնում է այն մաքսային մարմնին, որի հսկողության տակ գտնվում է նշված տրանսպորտային միջոցը, այսինքն՝ այդպիսի տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծումը ձեւակերպած մաքսային մարմնին:

18. Մաքսային մարմինը մերժում է ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումն այն դեպքերում, երբ՝

1) ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին դիմումը ներկայացվել է ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնելու իրավասություն չունեցող մաքսային մարմին,

2) դիմումը ներկայացվել է համապատասխան լիազորություն չունեցող անձի կողմից,

3) չեն ներկայացվել դիմումը եւ (կամ) տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման ժամանակ ձեւակերպված հայտարարագիրը (այլ փաստաթուղթ),

4) դիմումը ստորագրված կամ պատշաճորեն հաստատված չէ:

Ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձը հայտարարատուի կողմից ներկայացված հայտարարագրում կամ այլ փաստաթղթում եւ դիմումի մեջ կատարում է «Երկարաձգումը մերժված է _____պատճառով» գրառումը՝ նշելով մերժման հիմնավորված պատճառներն ու ամսաթիվը: Գրառումը հաստատվում է ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու մասին որոշումն ընդունած պաշտոնատար անձի՝ համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու համար ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծման սահմանված ժամկետի ավարտից հետո մաքսային մարմին դիմելու դեպքում, նրա նկատմամբ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան միջոցներ են կիրառվում: Ֆիզիկական անձի

ցանկությամբ ժամանակավոր ներմուծման ժամկետը Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետի սահմաններում կարող է երկարաձգվել:

19. Օտարերկրյա պետության տարածքում գրանցված եւ ֆիզիկական անձանց կողմից մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանվող տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացվում է մաքսային մարմին ժամանակավոր ներմուծման ժամանակ ձեւակերպված հայտարարագիրը եւ հետ արտահանման ժամանակ ձեւակերպված հայտարարագիրը ներկայացնելու միջոցով:

Մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձը հետ արտահանման ժամանակ ձեւակերպված հայտարարագրում կատարում է բացթողման մասին վկայող նշումներ: Հայտարարագրի այդ օրինակը թողնվում է մաքսատան գործերում:

Մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձը ժամանակավոր ներմուծման ժամանակ ձեւակերպված հայտարարագրի «Ծառայողական նշումների համար» բաժնում կատարում է «Արտահանում» գրառումը՝ նշելով արտահանման ամսաթիվը: Գրառումը հաստատվում է մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի՝ համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով: Հայտարարագրի այդ օրինակը վերադարձվում է ֆիզիկական անձին:

Ժամանակավոր ներմուծվող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների հետ արտահանումն իրականացնելու ժամանակ մաքսային մարմնի կողմից այլ փաստաթղթի (դրա օգտագործման դեպքում) ձեւակերպման կարգը որոշվում է կենտրոնական մաքսային մարմնի կողմից:

Բացթողումն իրականացրած մաքսային մարմինը դրա մասին տեղեկացնում է այն մաքսային մարմնին, որը ձեւակերպել է անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծումը:

20. Մինչեւ ժամանակավոր ներմուծման ժամկետի ավարտը անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը ազատ շրջանառության մեջ բաց թողնելու համար ֆիզիկական անձը պարտավոր է մաքսային մարմին ներկայացնել ժամանակավոր ներմուծման ժամանակ ձեւակերպված հայտարարագիրը կամ այլ փաստաթուղթ:

21. Այն դեպքում, երբ ապրանքները, որպես ուղեկցվող ուղեբեռ, ավիափոխադրողի կողմից փոխադրման համար ընդունվել են մաքսային տարածքի սահմաններից դուրս, սակայն փոխադրման ընթացքում ֆիզիկական անձից անկախ պատճառներով ֆիզիկական անձի ժամանման հետ միաժամանակ չեն առաքվել մաքսային տարածքի առաքման վայր, այդպիսի ապրանքները համարվում են չուղեկցվող ուղեբեռի հետ ժամանած ապրանքներ (այսուհետ՝ արտասահմանից լրացուցիչ ուղարկվող ուղեբեռ):

Հայտարարատուի կողմից ուղեկցվող ուղեբեռի հետ ժամանած ապրանքների հայտարարագրման եւ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված պայմանների կատարման դեպքում իրականացվում է այդպիսի ապրանքների բացթողում:

Որպես արտասահմանից լրացուցիչ ուղարկվող ուղեբեռ առաքվող ապրանքների առկայության դեպքում, եթե այդպիսի ապրանքների առնչությամբ ներմուծման արգելքներ կամ սահմանափակումներ սահմանված չեն եւ անհրաժեշտ չէ վճարել մաքսային վճարներ, ապա այդպիսի ապրանքների համար հայտարարատուն ներկայացնում է մաքսային հայտարարագիր (այսուհետ՝ նախնական հայտարարագիր): Ընդ որում, մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից

նախնական հայտարարագրի հիմնական ֆորմուլյարի «Ծառայողական նշումների համար» բաժնում նշվում է ամսաթիվը եւ գրանցման համարը (առկայության դեպքում), որոնք վկայում են ուղեկցվող ուղեբեռի հետ ժամանած ապրանքները ազատ շրջանառության մեջ բաց թողնելու մասին: Գրառումը հաստատվում է համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

Նշված հայտարարագրերը պահվում են մաքսային մարմնում՝ մինչեւ արտասահմանից լրացուցիչ ուղարկվող ուղեբեռի հետ ապրանքների ժամանումը:

Ժամանումից հետո արտասահմանից լրացուցիչ ուղարկվող ուղեբեռն ազատ շրջանառության մեջ բացթողման նպատակով այդ ապրանքների հայտարարատուի, փոխադրողի կամ այլ լիազորված անձի կողմից ներկայացվում է մաքսային մարմին: Մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է այն նախնական հայտարարագրի գրանցումը, որը պահվում է մաքսային մարմնում ուղեկցվող ուղեբեռի հետ տեղափոխվող ապրանքների վերաբերյալ կազմված հայտարարագրի հետ՝ նշելով գրանցման ամսաթիվը:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձը հայտարարատուի ներկայացրած տեղեկությունների հաստատման նպատակով իրականացնում է մաքսային հսկողություն, որի արդյունքների հիման վրա որոշում է ընդունում այդպիսի ապրանքների բացթողման հնարավորության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ մաքսային հսկողության ժամանակ արտասահմանից լրացուցիչ ուղարկվող ուղեբեռում հայտնաբերվում են ապրանքներ, որոնց առնչությամբ սահմանված են ներմուծման արգելքներ կամ սահմանափակումներ եւ (կամ) անհրաժեշտ է վճարել մաքսային վճարներ, արտասահմանից լրացուցիչ ուղարկվող ուղեբեռում պարունակվող բոլոր ապրանքների բացթողումը մերժվում է մաքսային մարմնի կողմից:

22. Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսային գործառնությունների իրականացման առանձնահատկություններ այն ապրանքների առնչությամբ, որոնք ընդունվել են ավիափոխադրողի կողմից փոխադրման համար ուղեկցվող ուղեբեռի հետ՝ մաքսային տարածքում գտնվող ուղարկման վայրից մաքսային տարածքից դուրս գտնվող նշանակման վայր՝ մաքսային տարածքից մեկնման վայրում միջանկյալ վայրէջքով, ինչպես նաեւ ավիափոխադրողներին, մեկնման վայրի սարքավորումներին ու տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող՝ այդպիսի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանները եւ պահանջները:

23. Այն դեպքում, երբ ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմնից տարբերվող մաքսային մարմնի կողմից կատարվում են այնպիսի գործողություններ, որոնց համապատասխան ապրանքները ճանաչվում են մաքսային հսկողության տակ չգտնվող, կամ անձն այդպիսի մաքսային մարմին է ներկայացնում նշված հանգամանքների առաջացումը հաստատող փաստաթղթեր, մաքսային մարմինը, որը արձանագրել է այն հանգամանքների առաջացման փաստը, որոնց դեպքում հնարավոր է ապրանքները ճանաչել մաքսային հսկողության տակ չգտնվող, դրա մասին տեղեկացնում է ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմնին: Ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմինը գրանցում է ապրանքները մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու հիմքերի մասին տեղեկություններն այն հայտարարագրում, համաձայն որի ապրանքը գտնվում է մաքսային հսկողության տակ, կամ կատարում է այդ փաստի արձանագրում՝

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Հայտարարագրում համապատասխան գրառում կատարելու դեպքում այդ գրառումը հաստատվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

24. Հայտարարագրի հիմնական եւ լրացուցիչ ֆորմուլյարների «Ծառայողական նշումների համար» բաժնում թույլատրվում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից այլ՝ մաքսային գործառնությունների անցկացումն արտացոլող գրառումների կատարումը: Գրառումները ենթակա են հաստատման մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ համարակալված անհատական կնիքի դրոշմվածքով:

25. Հայտարարագրի հետ միաժամանակ ներկայացվող փաստաթղթերը կամ դրանց պատճենները պահվում են մաքսային մարմնում՝ տեղափոխվող ապրանքների համար տրամադրված այն փաստաթղթերի հետ, որոնցով կենտրոնական մաքսային մարմնի կողմից նախատեսված կարգով հաստատվում է այդպիսի ապրանքների բացթողման փաստը:

26. Պաշտոնատար անձանց կողմից մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ ավտոմատացված տեղեկատվական համակարգերի օգտագործման կարգը որոշվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

27. Մաքսային միության անդամ պետություն մշտական բնակության համար ժամանող (վերաբնակվող) ֆիզիկական անձի, փախստականի, հարկադրաբար վերաբնակվող անձի անձնական օգտագործման ապրանքները կարող են հանձնվել ժամանակավոր պահպանման մինչեւ այն փաստաթղթերի տրամադրումը, որոնցով հաստատվում է Մաքսային միության անդամ պետություն մշտական բնակության համար նրա ժամանելը (վերաբնակվելը), անձին որպես փախստական, հարկադրաբար վերաբնակվող անձ ճանաչելը: